



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 հունիսի 2018 թվականի N 59_Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՈՒՄ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ազդարարման համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի մարտի 15-ի N 272-Ն որոշմամբ հաստատված հավելված N 1-ի 1-ին կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 6-ի N 02/41.3/9003-18 հանձնարարականը,

ո ր ո շ ու մ ե մ .

1. ՀՀ Սյունիքի մարզպետարանում ազդարարման համար պատասխանատու անձ նշանակել մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Աշոտ Ասրյանին:
2. Ազդարարման համար պատասխանատու Ա.Ասրյանին՝ ազդարարման համակարգի վերաբերյալ օրենսդրական պահանջների մասին իրազեկել մարզի համայնքներին և մարզպետարանի համակարգի կազմակերպություններին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

20.06.2018

X 

VERIFIED OCSP 20 06 2018 22:11:48 GMT+4

Подписано: HAMBARDZUMYAN KAREN 2611820473

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ



Կ. ՀԱՄԲԱՐԶՈՒՄՅԱՆ